2807

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 4

Գ. ՊԼԵԽԱՆՈՎ

1825 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ը

(Ժընեում 1900 թ. դեկտեմբերի 14/27-ին ռուսական ժողովում արտասանած ճառը).

9(47)
Պ-68

1925

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՀՐԱՏ № 315 ՄՈՍԿՎԱ

24 JAN 2006
30 MAY 2011

№ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 4

8.5.30
9(47)
Դ-68
կտ

Գ. ՊԼԵԽԱՆՈՎ.

1825 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ը

(Բրնեռում 1900 թ. դեկտեմբերի 14/27-ին ռուսական ժողովում արտասանված ճառը).

1925

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՀՐԱՏ № 315 ՄՈՍԿՎԱ.

22 JUL 1957
2802

Թարգմանություն Գ. Տ.—Մ.
Խմբագրություն ԴՐ. ՍԻՄՈՆՅԱՆԻ

526
46

Գ. Գ.!

Ուղիղ 75 տարի սրանից առաջ, 1825 թվականի դեկտեմբերի առաջին օրերին Պետերբուրգում տեղի ունեցավ մի անցք, որը ժամանակակիցներին խոր զարմանք պատճառեց և արժանի է ապագա սերունդների լիակատար ուշադրության։

Ես խոսում եմ Պետերբուրգի հրապարակներից մեկում տեղի ունեցած զինական ապստամբության մասին։

Ի պատիվ այդ անցքի մենք հավաքվել ենք այս դահլիճում, և, հարկավ, միայն մենք չենք, որ այսօր հարգում ենք նրա հիշատակը։ Հանրակրթական հիշողությունը արագ բարախեցնել է տալիս բոլոր այն առաս,— և գուցե ոչ միայն ռուս,—մարդկանց սրտերը, որոնք շահագրգռված չեն միապետության պահպանմամբ և անտարբեր չեն դեպի քաղքենուն քաղաքացի դարձնող հիմնարկները, այսինքն դեպի այն հիմնարկները, որոնք յերկրի համար ապահովում են քաղաքական ազատության բարիքները։

Այն կարգի ժողովներում, որպիսին այս ժողովն է, ընդունված չէ յերկար «ռեֆերատներ» կարդալ։ Այստեղ ավելի տեղին են, ինչպես գերմանացիներն են անվանում,—Festreden։ Այնուամենայնիվ յես մտադիր եմ բնութագրել ձեր առաջ, գոնե մի քանի խոսքով, ինչպես այն շարժումը, որ հասցրեց սենատի հրապարակում տեղի ունեցած ապստամբության, նույնպես և այն միջավայրը, ուր նա ծագեց և զարգացավ։

Ա. Գերցենը իր «La Conspiration russe de 1825» բրոշյուրի մեջ ասում է, որ Ալեքսանդր I թագավորության որով «ազնվականությունը կազմում եր, այսպես ասած, ակտիվ ժողովուրդ, որի տակ ստորևով գտնվում եր անշարժ մնացած ժողովուրդը և որի վրա վերևում կանգնած եր կառավարությունը, որը հրաժարվում եր առաջ շարժվել»։

Ժողովուրդը, այսինքն իսկապես գյուղացիությունն ու այն ժամանակվա ֆաբրիկային սակավաթիվ բանվորները, այդ միջոցին էլ բնավ անշարժ չեր։ Նա խոր կերպով հուզվում եր, և նրա դժգոհությունը մերթ այստեղ, մերթ այնտեղ, պոռթկում եր, ինչպես մեզ մոտ են ասում, բունտերի ձևով։ Սակայն Գերցենը այնուամենայնիվ ի-

բավացի յե այն խմաստով, վոր մեր կողմից նկատի առնվող շարժումը տեղի ուներ բացառապես ազնվականության մեջ։ Ցերբ Բիլեեի մեջ միտք ծագեց վաճառականներին Բարորության միության (Союз Благоденствия) անդամագրել, այդ միտքը նրա ընկերների կողմից մերժվեց, վորովհետև, ինչպես արտահայտվեց Միության անդամ բարոն Շտեյնգելը, մեր վաճառականները տխմար մարդիկ են։

Սակայն ի՞նչպիսին եր այն ժամանակ ազնվականության միջավայրը, ի՞նչպիսին եր ազնվականության սոցիալական դրությունը։

Ազնվականությունը բարձրագույն, տրտոնյալ դասակարգ եր։ Նա շահագործում եր գյուղացիներին։ Այն ժամանակվա Ռուսաստանի տնտեսական յեռանդության պատճառով գյուղացիների շահագործումը ազնվականության կողմից տեղի յեր ունենում ամենագռեհիկ ձևով—ճորտային կախման ձևով։ Ճորտատիրական իրավունքը վորոշում եր կալվածատերերի ու գյուղացիների բոլոր հարաբերությունները ու իր կնիքն եր դնում Ռուսաստանի ամբողջ սոցիալ-քաղաքական կազմի վրա։ Գյուղացիները կալվածատերերի դեմ մղվող իրենց անդադար, թեև համարյա միշտ դաղտնի պայքարում, անվստահ իրենց սեփական ուժերի վրա, իդեալականացնում եյին ցարին, պատկերացնելով նրան իբրև ժողովրդի պաշտպան։ Նրանք պատրաստ եյին վոչնչացնել ազնվականներին բարձրագույն կառավարության առաջին նշանն ստանալուն պես։ Հենց միայն այդ հանդամանքը բավական եր, վորպեսզի ազնվականները զրկվեյին ցարական իշխանության վերաբերմամբ ունեցած ամեն տեսակի անկախությունից։ Իսկ դրան միանում եր նաև ստորին, աղքատ ազնվականության տնվըստահ և նույնիսկ ուղղակի թշնամական վերաբերմունքը դեպի բարձրը, հարուստ ազնվականությունը։ Հայտնի յե, վոր այդ վերաբերմունքը զգալի չափով նպաստեց Թագուհի Աննա Իվանովնայի այն հաղթանակին, վոր նա տարավ բարձրաստիճան պաշտոնատարների (верховники) վրա, վորոնք փորձում եյին սահմանափակել նրա իշխանությունը։

Այդ ամենի շնորհիվ «Ռուսաստանի փառապանծ ազնվականությունը» ակամայից ստիպված եր հաշտվել միահեծանության չարիքների հետ և իր անձնվիրության մեջ հավատարիմ մնալ նույն այն թագավորներին, վորոնց դեմ նա այնքան հաճախ և յերբեմն այնքան հաջող «դավեր եր լարում»։ Ռուս ազնվականը, վորը իր ստորադրյալների նկատմամբ իրեն պահում եր «ինչպես մեծ աղա» (важный барин), բարձրագույն իշխանության հետ ունեցած հարաբերությունների մեջ իրեն պահում եր ինչպես լակեյ։ Ահա ինչպես ե բնութագրում, որինակ, Մոսկվայի բարձր հասարակության տրամադրությունը, խելոք ու դիտող անգլուհի միս Կատրին Ուիլմոտը, վորը 1805—1807 թվականներին հյուր եր

յեկել իշխանուհի Յե. Ռ. Դաշկովայի մոտ. «Յենթարկությունը մեծ չափով տիրապետում ե Մոսկվայում։ Իսկապես այստեղ չկա այն, վոր կոչվում ե ջենտլմեն. ամենն վոք իր արժանապատվությունը չափում ե թագավորական վողորմածության չափով։ Ուստի ծեր ապուշներն ու ցնդած կանայք ամենակարող են... ունենալով իրենց վրա ավելի շատ ժապավեններ ու աստիճանավորումներ, քան յերիտասարդները»[1]) Յեվ նույն միս Ուիլմոտը բավականին պարզ տեսնում եր դիտված «հնազանդության» վոգու և ճորտատիրական իրավունքի միջև յեղած սերտ կապը։

«Յես նայում եմ ամեն մի ռուսական պլանտատորի վրա,—ասում ե նա,—իբրև այդ թագավորությունը շրթայող հսկայական կապանքի յերկաթե մի ողակի. և յերբ հասարակության մեջ յես հանդիպում եմ նրանց, ակամայից մտածում եմ, վոր նրանք իրենք ևս բռնակալի ճորտերն են»[2])։

Միս Ուիլմոտի նամակները, ինչպես յես ասացի, վերաբերում են 1805—1807 թվականներին, այսինքն Ալեքսանդր I թագավորության սկզբին։ Սակայն ազնվականության միջավայրում իշխող վոգին, հարկավ, չփոխվեց և այդ թագավորության վերջին։ «Այն, ինչ կոչվում եր բարձր, կրթված հասարակություն,—ասում ե դեկաբրիստ Ի. Դ. Յակուշկինը,—դա այն ժամանակ մեծ մասամբ բաղկացած եր հնածեսներից, վորոնց համար մեզ հետաքրքրող վորև և հարցի շոշափումը սարսափելի վոճրագործություն կթվար։ Իրենց կալվածներում ապրող կալվածատերերի մասին խոսելն անգամ ավելորդ ե»[3])։ Ազնվականության հսկայական մեծամասնությունը ճորտատիրական իրավունքի վոչնչացման մասին մտածել անգամ չեր ուզում։

«Համարյա բոլոր կալվածատերերը,—շարունակում ե Ի. Դ. Յակուշկինը,—նայում եյին գյուղացիների վրա, իբրև ամբողջովին իրենց պատկանող սեփականության, և ճորտատիրական վիճակի վրա՝ իբրև սրբազան հնության, վորին դիպչել չի կարելի առանց պետության հիմքերը ցնցելու։ Նրանց կարծիքով, Ռուսաստանը պահվում եր միայն ազնվատոհմ դասի շնորհիվ, իսկ ճորտատիրական վիճակի վոչնչացումով կվոչնչանար և ինքը ազնվականությունը»[4])։ Դուք, պարոններ, հեշտությամբ կարող եք պատկերացնել ձեզ, թե իրերի նման դրության սոցիալական և հոգեբանական հետևանքները ինչպես են յեղել և ինչ-

---

1) Письма из России (1805—1807) Мисс Катрин Уильмот. перевод с английского языка, Лейпциг, 1876, стр. 49.

2) Նույն տեղը, եջ 61.

3) Записки декабристов. Выпуск первый. Записки Ивана Дмитриевича Якушкина, Лондон, 1862 г. стр. 8—9

4) Նույն տեղը եջ 21.

պես պետք է լինեին։ Նույն այդ Ի. Դ. Յակուշկինը իրավացի կերպով նկատում է, որ ճորտատիրական իրավունքը մեզ մոտ ամեն մի քայլափոխում յերևան եր գալիս ամենագարշելի հեռևանքներով։ «Անընդհատ ինձ լուրեր եյին հասնում,—ասում է նա—իմ հարևան կալվածատերերի վայրագ վարմունքների մասին։ Նրանցից ամենամոտիկը՝ Ժիգանովը, որն ուներ ընդամենը 60 հոգի, շարունակ կառքով եր շրջում ու բարակների և գամփռների մի հսկայական վոհմակ ուներ, մինչդեռ նրա գյուղացիները քաղցից համարյա մեռնում եյին և հաճախ, դաշտային աշխատանքներից գողտուկ հեռանալով իմ և իմ գյուղացիների մոտ եյին գալիս վողորմություն խնդրելու»... «Միևնույն ժամանակ համարյա անընդհատ լուրեր եյին հասնում զանազան նահանգներում տեղի ունեցած եկզեկուցիաների մասին»[1]։ Համբերությունից դուրս գալով, գյուղացիները հրաժարվում եյին հնազանդվել, և այն ժամանակ զինվորական ուժ եր ուղարկվում նրանց վրա, որը անգթորեն պատժում եր նրանց։ Ճիպոտն ու գավազանը, ծայրահեղ դեպքում՝ սվիններն ու գնդակները, «նահապետական» ճորտատիրական ռեժիմի անհրաժեշտ արդյունքն ու անխուսափելի դասատիրական միջոցն եյին։ Դաժանությունը արժանիք եր դառնում նրանց համար, որոնք կանգուն եյին մնում միայն դաժանության ոգնությամբ։ Ի. Դ. Յակուշկինից մենք իմանում ենք, որ այն ժամանակվա ամբողջ գավարդիայում ամենալավը համարվող Սեմյոնովսկի գնդի սպաները մինչև 1813—1814 թվականների արտասահմանյան արշավանքը, սիրում եյին միմիանց հետ խոսել այն մասին, թե ինչպես ավելի լավ և պատժել զինվորներին—քիչ քիչ, բայց հաճախ, թե սակավ, բայց խիստ։ «Ես լավ հիշում եմ,—ասում է նա,—որ յերկրորդ գումարտակի հրամանատար բարոն Դալլասը, որը հետագայում Կարլոս X որով Ֆրանսիայում արտաքին գործերի մինիստր դարձավ, այն կարծիքին եր, որ պետք է պատժել սակավ, բայց միևնույն ժամանակ զինվորին 200 ճիպոտից պակաս յերբեք չի կարելի տալ։ և հարկավոր է նկատել, որ այդպիսի անողոք պատիժներ գործադրվում եյին ոչ միայն վատ վարքի համար, այլ յերբեմն ծառայության ժամանակ յեղած ամենահասարակ մեղքի համար և նույնիսկ զորաշարքում կանգնած միջոցին պատահած սխալի առթիվ»[2]։

Այս ամենը ցույց է տալիս, որ այն ժամանակվա ազնվականության հսկայական մեծամասնությունը «ակտիվ» եր թերևս միայն ի վնաս ժողովրդի։ Այդ մեծամասնությունից չեր կարելի քաղաքացիական անշահասեր արիություն սպասել։ Յեվ մենք հպիվ թե սխալվենք, յեթե նրան վերագրենք Կ. Ֆ. Ռիլեևի խոսքերը (նրա «Ստանսներ»-ից).

Ամենուրեք հանդիպումներ անուրախ,
Վորոնում ես ունայնորեն դու մարդիկ
Ու հանդիպում դիակների միայն պաղ,
Յեվ կամ անմիտ մանուկների...

Բայց ի պատիվ մեր յերկրի, այդ ամեն մի կենդանի մտքի ու ամեն տեսակի ազնիվ հույզերի համար մեռած միջավայրում Արևմտյան Յեվրոպայի tiers état ազատագրական շարժումների ազդեցության տակ, սկսեցին յերևան գալ մարդիկ, որոնք հասկանում եյին այն ժամանակվա Ռուսաստանի դրության ամբողջ սարսափը և պատրաստ եյին բոլոր ուժերով ծառայելու ռուս ժողովրդի ազատագրման գործին։ Այդպիսի մարդիկ մեզանում պատահում են արդեն տասնութերորդ դարում։ Դրանք գաղափարախոսներ եյին, որոնք, (արտահայտված «Կոմունիստական Մանիֆեստի» խոսքերով) հասել եյին մինչև պատմական շարժման ընթացքի թեորիական ըմբռնմանը։ Նրանք ատում եյին ճորտատիրական իրավունքը և ձգտում եյին քաղաքացիական ազատության։ Միաժամանակ նրանք շատ պարզ գիտակցում եյին, որ քաղաքացիական ազատությունը հնարավոր չի այնտեղ, ուր ցարական կամայականության համար սահմաններ գոյություն չունեն։

Այսպես, դեռ Կնյաժնինը ասում եր իր «Вадим»-ում։

Միապետությունն ամենուրեք չարիքներ է ծնում,
Վտանգում է մինչ իսկ առաքինությունը բյուրեղ,
Ու, կրքերին ազատորեն ճանապարհներ բացելով,
Թագավորին բռնակալ է դարձնում։

Սակայն տասնութերորդ դարի ազատագրական ձգտումների ամենացայտուն ներկայացուցիչը անկասկած յեղել է Ռադիշչևը։ Նրա նշանավոր «Ճամբորդություն Պետերբուրգից մինչև Մոսկվա» (Путешествие из Петербурга в Москву)-ն ցույց է տալիս, թե ինչպիսի ուժեղ զայրույթ են պատճառել նրան «ազնվականության ագահությունը, կողոպուտը, վայրագությունը և ազգատի անպաշտպան դրությունը»։ Նա կալվածատերերին ագահ գազաններ ու անկուշտ տզրուկներ է անվանում։ Նա հարց է տալիս նրանց, թե ինչ են թողնում գյուղացուն, և պատասխանում է. «Այն ինչ խլել չեք կարող՝ ողը։ Այո, միայն ողը։ Խլում եք նրանից հաճախ ոչ միայն հողի բարիքները՝ հացն ու ջուրը,

[1]) Նույն տեղը, եջ 40 և 24.

[2]) Նույն տեղը, եջ 28—29.

այլ և հենց լույսը... Ահա շղթայվածի վիճակը! Ահա գարշահոտ բանտի կալանավորի վիճակը! Ահա լծկան յեզան վիճակը!»[1]։

Ռադիշչևը, ատելով հորատատիրական իրավունքը, ատում եր և ցարական իշխանությունը։ Նրա՝ շատ տեսակետներից ուշագրավ՝ «Ազատություն» (Вольность) Ոդերբողում այժմյան ընթերցողին առանձնապես զարմացնում է հետևյալ տունը, վորն ըստ յերևույթին տասնյոթերորդ դարի Անգլիական հեղափոխության հիշողությունների ազդեցությունն է կրում և մարգարեական հանդիսացավ Ֆրանսիայի վերաբերմամբ, ուր այդ ժամանակ հեղափոխության փոթորիկը ավելի ու ավելի եր բարձրանում։

Կապտամբի ամենուրեք զորքը քաջամարտ,
Հույսը՝ զենք ամենքին.
Ու արյունով պսակազարդ տանջողի
Կուզի մաքրել իր ամոթը ամեն վոք.
Փայլփլում է ամենուրեք, տեսնում եմ յես, սուրը կորուկ
Բազմաերանգ մահն է արդեն սավառնում
Արքայական հպարտ գլխի վրայով։
Դե՜հ, հրճվեցեք ժողովրդներ միաձույլ!
Այս բնության իրավունքն է վրեժի
Վոր արքային կառափնարան է տանում!

Ի գեմս Ռադիշչևի թերևս մենք առաջին անգամն ենք հանդիպում «ժամավորականությունից» յելած հետևողական և համոզված ռուս հեղափոխականի։ Ցեվ իզուր չեր Ցեկատերինա II նրա մասին ասում, թե նա Պուգաչովից ել ավելի վատ խռովարար է...

Հայտնի յե, վոր Ռադիշչևը կործանվեց, կարելի յե ասել, յերկու անգամ, սակայն այն ձգտումը, վորի ամենաառաջին ներկայացուցիչներից մեկն եր նա, չկործանվեց, այլ զարգացավ ու ամրացավ հետագա թագավորությունների ժամանակ։ Տասնինյերրորդ դարի քսանական թվականներին այդ ձգտումը իր կողմնակիցներն և գտնում ավելի կրթված սպաների շրջանում։ Սպայության շրջանում քաղաքական մտքի արթնացմանը շատ նպաստեցին, ինչպես հայտնի յե, Նապոլեոնի պատերազմները։ «Մի ամբողջ տարի Գերմանիայում և ապա մի քանի ամիս Փարիզում մնալը,—ասում է Ցակուշկինը,—չեր կարող գոնե վորոշ չափով չփոխել ռուս մտածող յերիտասարդության հայացքները. այդ հսկայական շրջապատում մեզնից ամեն մեկը շատ թե քիչ զարգացավ»[2]։ Ցեվ, յերբ

[1]) «Путешествие из Петербурга в Москву. (1790), Лейпцигское издание, 1876 г. 219—220.

[2]) Записки, стр. 4—5.

այդ պատմական իմաստով իսկապես «վիթխարի» շրջապատից ռուս կրթված յերիտասարդությունը հայրենիք վերադարձավ, նրան անխուսափելիորեն, սպասում եյին մի շարք ամենածանր տպավորություններ։ Ժողովրդի ամոթաբեր ստրկությունը և թագավորի ինքնիշխանությունը չեյին կարող չծակել այն աչքերը, վորոնք արդեն ընտելացել եյին ավելի մի՛ թիթխարական տեսարանների. այդ ամենից լավ յերևում է հենց Ցակուշկինի գրությունների։

«14 թվականին, ասում է նա, Ֆրանսիայից մենք ծովով Ռուսաստան վերադարձանք։ Առաջին գվարդիական դիվիզիան Որանիենբաումի մոտ ափ իջավ և մաղթանք կատարեց... Մաղթանքի ժամանակ վոստիկանությունը անխնա ծեծում եր ժողովրդին, վորը փորձ եր անում զորաշարքին մոտենալ։ Հայրենիք վերադառնալուց հետո դա մեզ վրա առաջին աննպաստ տպավորությունը թողեց»[1]։ Հետաքրքրական է, վոր Ցակուշկինի ստացած այդ աննպաստ տպավորությունը ավելի ուժեղացնում է Ալեքսանդր I վարմունքը։ Իններորդ գվարդիական դիվիզիայի Պետերբուրգ մտնելու պահին Ցակուշկինը իր բարեկամ Տոլստոյի հետ Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի փոսկե կառքից քիչ հեռու կանգնած «հիանում եր» կայսրով, վորը, գեղեցիկ շեկ-կարմիր ձին հեծած, մոտենում եր շքակառքին, պատրաստվելով սուրը խոնարհելու թագուհու առաջ։ «Բայց հենց այդ նույն րոպեին, համարյա նրա ձիու առջևից վազելով անցավ մի գյուղացի։ Կայսրը ձիուն խթանեց ու մերկացրած սրով վազողի վրա հարձակվեց։ Վոստիկանությունը գյուղացուն փայտի տակ առավ։ Մենք չեյինք հավատում մեր սեփական աչքերին ու շուռ տվինք յերեսներս, ամաչելով մեր սիրած կայսրի փոխարեն։ Այդ ինձ համար առաջին հիասթափությունն եր նրանից, յես ակամայից հիշեցի գեղեցկուհի դարձած կատվի մասին, վորը սակայն չկարողացավ մկանը տեսնել ու չհարձակվել նրա վրա»[2]։

Ցակուշկինի այդ խոսքերից յերևում է, վոր Նապոլեոնի պատերազմների ժամանակ մեր կրթված ու ազատամիտ զինվորական յերիտասարդությունը դեռ սիրում եր Ալեքսանդր I։ Այդ հաստատվում է և ուրիշ վկայություններով։ Բայց խաղաղություն կնքելուց հետո գործը շատ շուտ այլ ընթացք ստացավ։ Մինչդեռ այն ժամանակվա առաջավոր մարդիկ ավելի ու ավելի եյին համոզվում հասարակական լայն բարեփոխությունների անհրաժեշտության մեջ, Ալեքսանդր I ավելի ու ավելի եր ընկնում պահպանողականների ազդեցության տակ։ Անվերջ ճանապարհորդությունների մեջ լինելով և միշտ զբաղված միջազգային քաղաքականության հարցերով, նա ներքին գործերով համարյա ընավ չեր պարապում, հանձնարարելով այդ իր

[1]) Նույն տեղը, եջ 5

[2]) Նույն տեղը, եջ 5—6

սիբելիներին, վորոնց մեջ շատ շուտով առաջին տեղը դրավեց բթամիտ ու անգութ Արակչեևը։ Պետական խորհրդի անդամներն ու մինիստրները պարտավոր եյին դիմելու նրան այն դեպքում միայն, յերբ կայսերական թույլտվություն եր պահանջվում։ Թե ռուս ժողովրդի համար ինչ եր նշանակում Արակչեևը—դա անկասկած հայտնի յե այստեղ ներկա գանվողներին, այդ պատճառով յես այդ մասին չեմ խոսի։ Բայց պետք է նկատեմ, վոր այն ժամանակվա ռուս հասարակության ազատամիտ փոքրամասնության մեջ վորքան ավելի յեր աճում ատելությունը դեպի Արակչեևը, այնքան նրա՝ դեպի Ալեքսանդր I յեղած սիրո զգացմունքը՝ ավելի արագ եր փոխվում դրժկամության զգացմունքի և նույնիսկ, ինչպես Յակուշկինն է ասում, կատաղության[1]։

Դժվար չե հասկանալ, թե ինչպես եր ազդում այդ զգացմունքը այն ժամանակվա առաջադեմ մարդկանց մտքերի վրա. յեթե սերը դեպի կայսրը նրանց մեջ առաջ եր բերում համակրանք և վերևից արվելիք բեֆորմների սպասում, հիասթափությունը ու նրա դեմ յեղած կատաղությունը պետք է առաջ բերեր և ամրացներ նրանց մեջ համակրանք ու ձգտում դեպի հեղափոխական գործելակերպը։ Մարդիկ, վորոնք դեռ քիչ առաջ հիանում եյին Ալեքսանդր I և, հավատացած նրա բարի ցանկություններին, պատրաստ եյին նրա յետևից աշխարհի ծայրը գնալու, այժմ նզովում եյին նրան ինչպես «բռնակալի» ու խոսում կայսրի սպանության մասին։

Առաջադեմ մարդկանց այդ նոր տրամադրությունը անմիջապես ազդեց նրանց գրական ճաշակի վրա։ Նրանք ամենայն յեռանդով ոկսեցին կարդալ հներին, առանձնապես Պլուտարխին, վորով վոչ պակաս ուժեղ չափով տարվում եյին տասնութերորդ դարի ֆրանսական հեղափոխականները։ Նրանց սեփական գրական աշխատությունների մեջ բարձր հնչում եյին քաղաքացիական մոտիվները։ Հիշեցեք Կ. Ֆ. Ռիլեևի «Думы», «Михаил Тверской», «Волынский», «Артамон Матвеев» և ուրիշներ. հիշեցեք հատկապես նրա «Гражданин»։ Այս վերջին բանաստեղծությունը այնքան գեղեցիկ և արտահայտում այն ժամանակվա հեղափոխականների տրամադրությունը, վոր ոգեշնչիչ կլինի կարդալ այստեղ ամբողջովին։ Ահա նա.

Ցավ մի՞թե յես որհասական այս պահին
Պիտ անարգեմ քաղաքացու պատիվը,
Ու նմանվեմ քեզ՝ թույլ ու ուժասպառ
Սլավոնական այլասերված ազգ։

[1]) Նույն տեղը. եջ 36

Վոչ, յես ընդունակ չեմ հեշտասիրության փարումների մեջ
Ամոթալի դատարկությամբ քարշ տալ որերս ջահել,
Ու տառապել փոթորկվող հոգով
Միապետության ծանր լծի տակ։

Թող ջահելներն՝ աննախատես ճակատագրին՝
Զգանկանան հասկանալու իմաստը դեթ իրենց դարի
Ու անպատրաստ, ինան անմտա
Բռնաբարված ազատության գալիք մարտին.

. . . . . .

Կզղջան նրանք, յերբ ժողովուրդը, ապստամբվելով,
Կգտնի նրանց ծույլ գզվանքների փարումների մեջ,
Ու խենթ պայքարում իրավունքի ազատություն փնտրելիս,
Նրանց մեջ չի տեսնի վոչ Բրուտոս, վոչ Ռիլեգի։

Կ. Ֆ. Ռիլեևը յեղել է առավելապես քաղաքացիական զգացմունքների յերգիչ։ Նա պոեզիայի մեջ ամենից առաջ բովանդակությունն եր գնահատում, այդ խնդրում մեծապես տարբերվելով Պուշկինից, վորն անդամ ամենաուժեղ քաղաքական վոգևորության տարիներում չեր դադարում ինչ ձևի գնահատողը։

Բայց առաջավոր շրջանի ընդհանուր տրամադրությունը այնուամենայնիվ ազդեց և Պուշկինի վրա։ Որինակի համար ցույց կտամ նրա Ուղերձը (Послание) Չաադաևին, ուր նա հրավիրում է իր ընկերոջը իր հետ միասին հայրենիքի ազատության գործին ծառայել.

Մինչ ազատության տենչով ենք վառվում,
Մինչ մեր սրտերը պատվի համար կյանք ունեն,
Ընկե՛ր իմ հայրենիքին նվիրենք
Մեր հոգիների հույզերն գեղեցիկ։

Հավատա ընկեր, պիտ բոցավառվի
Արշալույսը յերջանկության հմայիչ,
Ռուսաստանը կզարթնի քնից
Ու կտապալի լուծը միապետության։

Վոչ սակավ բնորոշ է և նշանավոր «Դաչույն» (Кинжал) բանաստեղծությունը, վորն առանձնապես աչքի է ընկնում անխնա ատելությամբ դեպի բռնակալությունը։

Յերբ վոր մարդկանց մեջ նման զգացումներ են ծագում, այն ժամանակ գործողությունը նրանց համար հոգեբանական անհրաժեշտություն է դառնում։ Ցավ մենք տեսնում ենք, վոր ար-

դեն 16 թվականին գաղտնի միությունների կազմակերպման փորձեր են յերևան գալիս։ Այդ միություններից ամենանշանավորը յեղել է «Փրկության կամ հայրենիքի իսկական ու հավատարիմ զավակների Միությունը», (Союз спасения или истинных и верных сынов отечества) որի կազմակերպման մասնակցել են Մուրավյեով յեղբայրները՝ Ալեքսանդր և Նիկիտա, իշխան Տրուբեցկոյը և Պավել Պեստելը։ Այդ միությունը իրեն նպատակ եր դրել ձևափոխել պետական հիմնարկները։ Բայց այն ժամանակ գոյություն ունեցին և այլ գաղտնի միություններ, որոնց նպատակը աչքի չեր ընկնում այդպիսի որոշակիությամբ։ Այդպես եր որինակ Արլովի հիմնած, «ռուս ասպետների» միությունը, (общество «руских рицарей»), որի անդամները ձգտում եյին «չարագործությունները արմատախիլ» անելուն միայն և դրա համար անգամ մտադիր եյին կայսրական թույլտվություն խնդրել։ Պետերբուրգում, մի քանի գվարդիական գնդերի սպաների մեջ, գոյություն ունեցին և ուրիշ միություններ, ինչպես և Մալարոսիայում, ուր Նովիկովը մասոնական ժողովարանին կից Մալարոսական Միություն (Малороссийское Общество) հիմնեց և ուր հետագայում կազմվեց միացյալ սլավոնների միությունը, որը ձգտում եր բոլոր սլավոնական ժողովուրդների ազատության և ֆեդերատիվ միության։ Սակայն այստեղ, մեզ ամենից շատ «Փրկության Միությունը» (Союз спасения) բաղդն ե հետաքրքրում։

Այդ միության պատմության մեջ, որը շատ շուտով վերանվանվեց «Բարորության Միություն» (Союз Благоденствия), անհրաժեշտ ե ամենից առաջ մատնանշել, իբրև ճգնաժամի դարեշրջան, 1821 թ. փետրվարի Մոսկվայի համագումարը, որտեղ վորոշվեց հակակառավարական գործունեությունը ընդհատել ու վերջ տալ հենց իրեն, միության գոյության։ Բայց իսկապես միությունը չցրվեց, այլ միայն վերակազմվեց, իսկ նրա գործունեության ընդհատման վորոշումը ընդունվեց, վորպեսզի նրանից հեռացվեն վորոշ անբարեհույս ու անվճռողական տարրերը։ Հենց նույն այդ համագումարում նոր կանոնադրություն և մշակվում, որը բաժանվում ե յերկու մասի. առաջին մասում, որը վերաբերում եր նոր անդամագրվողներին, ասվում ե, թե միությունը մարդասիրական նպատակներ և հետապնդում. յերկրորդ մասում, որը իրագեկների (для посвященных) համար եր, ցույց ե տրվում միության իսկական նպատակը —միապետության սահմանափակումը Ռուսաստանում։ Միության գործերը վարելու ու առաջնորդելու համար հիմնվում են հատուկ «Դումաներ»։ Առաջին հերթին հիմնվում են այդպիսի չորս դումա՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Սմոլենսկի նահանգում և Տուլչինում։

Միության հետագա պատմության մեջ գլխավոր դերը պատկանում ե Տուլչինի բաժանմունքին, որը հայտնի յեր «Հարավային Միություն» (Южное Общество) անունով և գտնվում եր Պ. Պեստելի ազդեցության տակ, և Պետերբուրգինը, որը յերբեմն «Հյուսիսային Միություն» (Северное Общество) եր անվանվում։ Վերջինում հետագայում գլխավոր ազդեցությունը ձեռք ե բերում Կ. Ֆ. Ռիլեևը։

Արդեն Մոսկվայի համագումարին վճռվում ե զորքերի վրա գաղտնի միության վոգով ազդել և «ամեն մի դեպքի համար նախապատրաստել» նրանց[1]։ Այդ ժամանակից սկսած «Բարորության Միության» անդամները չեն թողնում զինական ապստամբության միտքը, որն ըստ յերևույթին ամենամու հաստատվում եր իսպանական անցքերի ուժեղ ազդեցության տակ։ 1823 թ. ծրագրվում ե Բորբուլյում զորատեսի ժամանակ ճանկել թագավորին։ Այդ ծրագիրը ուշադրի բացակայության պատճառով չի իրագործվում, սակայն շատ ժամանակ չանցած քիչ փոփոխված ձևով նորից յերևան ե գալիս։ Հենց 1824 թ. ապրիլին Պեստելը, Բեստուժեվ-Ռյումինը, Պոջիո յեղբայրները, Դավիդովը և Շվեյկովսկին մտադրվում են Բելայա Ցերկովի զորատեսի ժամանակ սպանել Ալեքսանդր I և զորքերը դրդռելով առաջնորդել նրանց Կիևի և Մոսկվայի վրա։ Պեստելը հույս ուներ, որ իրեն կհաջողվի, վոչնչացնելով կայսրական ընտանիքը, ստիպել Սենատին ու Սինոդին ճանաչել գաղտնի միությունը իբրև ժամանակավոր կառավարություն, որի վրա պարտականություն կդրվեր նոր իրավակարգ հաստատել։

Բելայա Ցերկովում զորատեսը չկայացավ, և այդ պատճառով ել այդ նոր ծրագիրը գործնական հետևանքներ չունեցավ։

Պեստելը համոզված հանրապետական եր և անհրաժեշտ եր գտնում Ռուսաստանում հանրապետություն հաստատել։ «Բարորության Միության» մի քանի այլ անդամները պատրաստ եյին բավարարվել Սահմանադիր ժողով հրավիրելով, որը կվորոշեր, թե Ռուսաստանը հանրապետական լինի, թե մնա միապետական[2]։

Սակայն բոլորն ել միանդամայն համաձայն եյին, որ անհրաժեշտ ե միապետության և ճորտատիրական իրավունքի գոյությանը վերջ տալ[3]։ Դավադիրների հաջողությունը կնշանակեր

---

[1]) Якушкин. Записки, стр. 58

[2]) Այդ մասին տես, «Գաղտնի քննիչ հանձնախմբի տեղեկագրերի քննություն» (Разбор донесений тайной следственной Коммисии), որը վերագրվում ե Նիկիտա Մուրավյովին և Լունինին և տպագրված ե դեկաբրիստների գրությունների («Записки декабристов» выпуск второй и третий, Лондон 1863 г. стр. 103—136) մեջ։ Հիմնադիր ժողովի մասին արված դիտողությունը գտնվում ե էջ 109-ում։

[3]) «Գաղտնի քննիչ հանձնախմբի տեղեկագրերի քննության» հեղինակ-

քաղաքացիական և քաղաքական ազատության հաղթանակը Ռուսաստանում։ Ամբողջ հարցը նրանումն է թե հաջողությունը հնարավո՞ր էր արդյոք։ Իսկ այդ առթիվ պետք է նկատել, որ դրա մեջ հաճախ կասկածում էին և իրենք «Բարորության Միության» անդամները։ Եվ այդ հանգամանքը,—դավադիրների կասկածը սեփական գործի հաջողության մեջ,—մեր առջև բաց և անում նրանց հոգեբանության մի ծայր աստիճանի նշանակալի գիծը։ Կասկածելով, համենայն դեպս յերբեմն, հաջողության հնարավորության մեջ, դաղտնի միության անդամները այնուամենայնիվ չեյին դադարում ձգտել կռվի ու բացահայտ ապստամբության։ Նրանք համարում եյին, որ իրենց կորուստը բարեբար զարկ կտա ռուսական քաղաքական մտքի զարգացմանը և պատրաստ եյին իրենց զոհաբերել հայրենիքի բարորության համար։ Նրանց հոգեբանության այդ գիծը ցայտուն կերպով արտահայտվում է Կ. Ֆ. Ռիլեևի «Նալիվայկոյի խոստովանության» (Исповедь Наливайко) նշանավոր հատվածում։

Անկում է ապատում, յես գիտեմ,
Նրան ով առաջինն ապստամբվի
Ժողովրդի ճնշողների դեմ.
Ճակատագիրը դատապարտել է ինձ արդեն։
Բայց թե վո՞րտեղ, յերբ և յեղել
Ազատությունն առանց զոհի։
Կյանքս պիտ տամ հայրենիքիս,—
Յես զգում եմ, յես այդ գիտեմ,
Ու բերկրանքով, ո՜ հայր իմ սուրբ,
Վիճա՛կը իմ որոնում եմ յես։

Դեկաբրիստ Ն. Ա. Բեստուժևը իր «Հիշողություններ Կոնդրատիի Ֆեոդորովիչ Ռիլեևի մասին» (Воспоминания о Кондратии Федоровиче Рылееве) գրքում պատմում է, որ յերբ Ռիլեևը, գրելով այդ «խոստովանությունը», կարդաց այն իր մոտ ապրող Միխայել Բեստուժևին, վերջինս բացականչեց. «Գիտե՞ս թե ինչպիսի զուշակություն ես գրել ինքդ քո և մեր մասին։ Դու կարծես թե ցանկանում ես այդ վոտանավորներով ցույց տալ քո ապագա վիճակը»։— «Մի՞թե դու կարծում ես, թե յես գեթ մի վայրկյան կասկածել եմ իմ կոչման մեջ,—պատասխանեց Ռիլեևը։—Հավատա ինձ, որ ամեն մի նոր

յերբ այդ հանձնախմբին արդարացի հանդիմանում են նրա համար, որ նա իր տեղեկագրի մեջ «լուսության և մատնում դյուղացիների ազատագրումը, որը պիտի քաղաքացիական իրա վունքներ վերադարձներ մեր մի քանի միլիոն հայրենակիցներին»։ (Նույն տեղը էջ 116) «Բարորության Միություն» այդ դիտավորության մասին խոսելը շահավետ չեր քննիչների համար։

որը համոզում է ինձ իմ անելիքների անհրաժեշտության մեջ և ապագա կորուստի մեջ, որով մենք պիտի դնենք մեր առաջին փորձը Ռուսաստանի ազատության համար. դրա հետ միասին նա համոզում է քնած ռուսաստանցիներին արթնացման անհրաժեշտ որինակ ցույց տալու մեջ»[1]։

Ն. Ա. Բեստուժևի այս վկայությունը ել վոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ «Բարորության Միության» անդամների մի վորոշ մասը գիտակցորեն նահատակության եր գնում։ Սակայն հայտնի յե, որ նահատակվելու ձգտումը վոչ միայն չի թուլացնում այդ գիտումն ունեցող մարդկանց յեռանդը, այլ տասնապատկում է այն։ Ռիլեևը, հաստատ համոզված լինելով նրա մեջ, որ իր կորուստը անհրաժեշտ է «քնած ռուսաստանցիներին արթնացնելու համար»—ինչպես յես արդեն ասացի, հանդիսանում եր հոգին Պետերբուրգի «Հյուսիսային» Միության, որը «Հարավային» նման գտնում եր, որ պետք է անհապաղ գործողության անցնել։ 1825 թ. Ռիլեևն, ըստ «քննիչ հանձնախմբի տեղեկագրի» խոսքերի սկսեց ակնարկներ անել 1826 թ. մայիսին ապստամբություն սկսելու հնարավորության մասին։ Պեստելն ել իր հերթին հնարավոր եր գտնում ապստամբվել նույն թվի հունվարին։ Բայց թե մեկի և թե մյուսի կողմից չնախատեսված հանգամանքներն այնպես դասավորվեցին. որ «Բարորության Միությունը» հարկադրված եր զենքի դիմել դեռ այդ ժամկետից ել առաջ։

1825 թ. հունիսին Ալեքսանդր I Բուդսկի 3-րդ հեծելազնդի յենթապա Շերվուդից դրավոր մատնություն ստացավ, որը մատնանշում եր դաղտնի միության գոյությունը և անգամ անվանում նրա անդամներից մեկին՝ Ֆյոդոր Վասիլովսկուն։ Նույն թվականի սեպտեմբերին Շերվուդը նոր մատնություն է անում, որն իր մեջ ավելի մանրամասն ցուցմունքներ եր պարունակում։ Շերվուդի այդ մատնությունները հաստատվում են գեներալ-լեյտենանտ Վիտգենշտեյնի կապիտան Մայբորոդի մատնություններով. վերջինս ինքը «Բարորության Միության» անդամ եր։ Այդ մատնությունների հիման վրա ձերբակալվում են «Հարավային Միության» մի քանի անդամները, որոնց թվում և Պեստելը։ Այս առաջին ձերբակալություններին անխուսափելիորեն պետք է հետևեին և ուրիշ ձերբակալություններ։ Համենայն դեպս «Բարորության Միությունը» մի շարք ծանր հարվածներ կստանար։ Սակայն բանը դրանն չհասավ։ Դեկտեմբերի տասնվեցերորդին, այն նույն որը, յերբ Հարավում ձերբակալվեց Պեստելը, Պետերբուրգում, Սենատի հրապարակի վրա, ապստամբություն առաջացավ։

Դուք, բոլորդ պարոններ, հարկավ, գիտեք, թե վորն եր Պետերբուր-

[1]) „Полярная Звезда„ кн. 6 стр. 1—2

դյան ապստամբության արտաքին առիթը։ Դավադիրները վորոշեցին իրենց նպատակների համար ոգտվել այն խառնաշփոթությունից, վոր առաջացել եր Ալեքսանդր I մահվան և մեծ իշխաններ Նիկոլայի ու Կոնստանտինի միջև գահաժառանգության հարցի շուրջը տեղի ունեցած վեճերի շնորհիվ։

Դեռ Ալեքսանդրի կենդանության ժամանակ Կոնստանտինը քիչ թե շատ հոժարակամ հրաժարվել եր գահը ժառանգելու իր իրավունքից, վորի հետևանքով այդ իրավունքը անցել եր Նիկոլային։ Սակայն այդ գործարքի մասին գիտեին, բացի շահագրգռված անձերից, միայն շատ քչերը, մինչդեռ ճնցյալ ամբողջ վոչ աստիճանավոր և նույնիսկ աստիճանավոր Ռուսաստանը Կոնստանտինին շարունակում եր թագաժառանգ համարել։ Յերբ վոր Ալեքսանդրի՝ Տագանրոկում տեղի ունեցած՝ մահվան լուրը Պետերբուրգ հասավ (նոյեմբերի 27-ին հ. տ.) Նիկոլայը, պալատական յեկեղեցում Ալեքսանդրի համար հոգեհանգիստ կատարելուց անմիջապես հետո, մի կողմ տարավ Պետերբուրգի զինվորական նահանգապետ Միլորադովիչին և ասաց նրան, վոր հանդուցյալ կայսրի կտակի հիման վրա գահը իրեն՝ Նիկոլային է պատկանում։ Դրան Միլորադովիչը պատասխանեց, թե Ռուսաստանում գահաժառանգության մասին որենք գոյություն ունի, վորին յենթարկվելով ինքն արդեն զորքին հրաման է արձակել հպատակության յերդում տալ Կոնստանտինին։ Նիկոլայը անկարող յեղավ Միլորադովիչի հաստատակամությունը կոտրել և ինքզինքը հարկադրված զգաց յերդում տալ իր ավագ յեղբորը։ Նրանից հետո յերդվեց Միխայիլ Նիկոլայևիչը և պալատական բոլոր բարձրաստիճան պաշտոնյանները։ Այդպիսով 1825 թ. նոյեմբերի 27-ին Կոնստանտինը ռուսական կայսր դարձավ։

Սակայն յերդում տալով իր յեղբորը, Նիկոլայը իր գործը տարված չեր համարում։ Նա այն ժամանակ Վարշավայում գտնվող Կոնստանտինի մոտ պատգամավորներ ուղարկեց, վորոնք պետք է հիշեցնեին նրան, վոր նա գահից հրաժարվել է։ Ամեն ինչից յերևում է, վոր նախկին «թագաժառանգը» այդ հիշեցումը ընդունեց մեծ դժգոհությամբ։ Նա չհամաձայնվեց իր կայսրական գահից հրաժարվելու մասին հայտարարել ի լուր համայն ժողովրդի։ Բայց և միևնույն ժամանակ չեր համարձակվում ժխտել Նիկոլայի իրավունքները։ Նա նստած եր իր առանձնասենյակում մռայլ և շփոթված և վոչինչի չեր ձեռնարկում այս կամ այն ուղղությամբ։ Հետևանքը յեղավ անիշխանության նման մի դրություն, վորը տևեց 16 որ ու ընդհանուր տարակուսանք առաջացրեց։

Պետերբուրգի բարձր հասարակության զվարճամոլները՝ «պաղ դիակները» ու «անմիտ մանուկները», անտարբեր դեպի իրենց յերկրի

բաղդը, սրախոսում եյին միայն այդ անմիտ խառնաշփոթության առթիվ, հարցնելով միմիյանց. կվանառվե՞ն արդյոք և ի՞նչպիսի գնով կվանառվեն վոչխարները։ Սակայն «Բարորության Միությունը» հանգիստ մնալ չեր կարող։ Բիլևի մոտ ամեն որ խորհրդակցության եյին հավաքվում այդ ժամանակ Պետերբուրգում գտնվող գաղտնի միության անդամները՝ իշխան Տրուբեցկոյը և Ռոլենկին, Բեստուժև յեղբայրները, Գլինկան, Բուլատովը և մյուսները։ Յեվ ամեն մի նոր խորհրդակցությունից հետո նրանց համար ավելի ու ավելի պարզ եր դառնում իրենց գործի շահերի տեսակետից անիշխանությունից ոգտվելու անհրաժեշտությունը[1]։ Իշխան Տրուբեցկոյը դիկտատոր է ընտրվում, և նրան իշխանություն է տրվում վճռական բոլորին ըստ իր հայեցողության գործել ու տնորինել հասարակական բոլոր ուժերը։ Ամենքն ել հասկանում եյին, վոր անցքերի վախճանը իրեն յերկար սպասել չի տա։

Դեկտեմբերի տասնեմեկին Բիլևի մոտ կայացած ժողովում վճռվում է յերդում չտալ Նիկոլայ Պավլովիչին և, զվարդիական գնդերին վոտքի հանելով, առաջնորդել նրանց Սենատի հրապարակը։ «Հույս ունենալով հաջողության վրա,—պատմում է Ի. Գուշչինը,—պատրաստվեց մի մանիֆեստ, վոր Սենատը պետք է հրապարակեր իր կողմից և վորով հրավիրվում եր Զեմսկային Դուման, վորը պետք է բաղկացած լիներ ամբողջ ռուսական յերկրի ներկայացուցիչներից։ Այդ Զեմսկային Դումային եր վերապահվում վորոշել, թե Ռուսաստանի համար կառավարչական վոր ձևն է ամենից հարմարը։ Մինչև Դումայի հավաքվելը, Սենատը պետք է Պետական Խորհրդի անդամներ Սպերանսկուն, Մորդվինովին և սենատոր Ի. Մ. Մուրավյով-Ապոստոլին ժամանակավոր կառավարիչներ նշանակեր։ Ժամանակավոր կառավարության կից պետք է գտնվեր գաղտնի միության մեկ անդամ և ուշի ուշով հետևեր կառավարության ամբողջ գործունեությանը[2]։

Հետևյալ որը, ամսի տասնյերկուսին, Բիլևը իմանում է, վոր գաղտնի միությունը մատնվել է նրա անդամներից մեկի Յա. Բոստովցևի կողմից, վորը իր «խղճի» պարտքն եր համարել հայտնել Նիկոլային նրան սպառնացող վտանգի մասին։ Այդպիսով վերջին նավերը այրված եյին. դավադիրներն արդեն նահանջել չեյին կարող, յեթե անգամ ցանկանային։ Բայց նրանք նահանջի մասին չեյին մտածում։

Դեկտեմբերի տասնչորսի առավոտյան, յերբ Պետերբուրգում գրանվող զորքերին հրամայված եր յերդվել Նիկոլային, Ալեքսանդր

[1]) «Մեզ արդարացի կերպով սրիկաներ կանվանեին, յեթե մենք բաց թողնեյինք ժամյան միակ դեպքը», գրում եր Գուշչինը Մոսկվա Սեմյոնովին։

[2]) «Четырнадцатое декабря» И. Пущина в «Записках декабристов», выпуск 2-й и 3-й стр. 143—144.

Բեստուժևը և իշխան Շչեպկին-Ռոստովսկին իրենց կողմն են գրավում Մոսկվայի լեյբ-գվարդիական գունդը և առաջնորդում Սենատի հրապարակը։ Քիչ ժամանակ անց նույն տեղն են գալիս լեյբ-գրենադերները, գումարտակային ադյուտանտ Պանովի ղեկավարությամբ, և գվարդիական նավատինների ծովային գունդը իր սպաներով Կյուխելբեկեր, Արբուզով, Պուշչին, Բելյաև յերկու յեղբայրները, Դիվովը և Բոդիսկոն։ Ծովային գվարդիական զորամասերի հետ յեկավ նրա հետ առնչություն չունեցող կապիտան-լեյտենանտ Ն. Բեստուժևը։ Բոլոր այս զորքերը տեղավորվեցին թիկունքով դեպի Սենատ, Մոսկովյան գնդի ձախ կողմից՝ լեյբ-գրենադերները, իսկ աջից՝ նավատինները։

Այն, ինչ վոր պատահեց հրապարակում կարելի յե նկարագրել մի քանի խոսքով։ Ցետ մղելով հեծելագնդի գրոհը, «խռովարարները» շարունակում եյին հաստատուն կանգնած մնալ, չյենթարկվելով վոչ մի «հորդորի» և ցրիվ են տրվում միայն կարտեչով։ Թողնելով Սենատի հրապարակը, նրանք փորձում են ամրանալ Նևայի սառույցի վրա, սակայն թնդանոթները շարունակում են իրենց արյունալի գործը կատարել, վոչնչացնելով լուրջ ընդդիմադրության ամեն մի հնարավորություն։ Ապստամբությունը ճնշվում է։ Սկսվում են մասսայական ձերբակալություններ։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր Նիկոլայը դաժանորեն հատուցեց պարտվածներին այն վախի համար, վոր ապստամբությունը պատճառել եր նրան։ Բայց նախ քան այդ պատիժը նկարագրելը, յես ցանկանում եմ մի քանի խոսք ավելացնել դավադիրների դեկտեմբերի տասնվեցերորդի գործողությունների մասին։

Կռվի նպատակահարմարության տեսակետից այդ գործողությունները հազիվ թե անգամ բարեացակամ քննադատության դիմանան։ Ճիշտ է մեծ շփոթություն առաջ բերեց նրանց մեջ Տրուբեցկոյի տարորինակ վարմունքը, վորը վոչ միայն չկատարեց իր պարտականությունը իբրև ապստամբության ղեկավար, այլ նույնիսկ Սենատի հրապարակը չեկավ։ Սակայն հենց միայն այն հանգամանքը, վոր դավադիրները, վարանելով գործի անցնել առանց նրա հրամանի, սպասում են նրան մինչև յերեկո Նիկոլային հավատարիմ մնացած զորքի դիմաց, կարծես թե ցույց է տալիս, վոր նրանք քիչ եյին տրամադրված հարձակողական գործողությունների դիմելու։ Նույն տպավորությունն են թողնում ինչպես այդ, նույնպես և նախորդ որվա դեպքերից շատերը։ Պուշչինի ասելով, Կախովսկին «խոսք է տալիս Ռիլեևին, վոր յեթե Նիկոլայ Պավլովիչը դուրս գա զորքի առաջ, նրան հարված կհասցնի»։ Այդ չի արվում։ Ինչու։ Պուշչինը այդ բացատրում է նրանով, վոր հետո Ալեքսանդր Բեստուժևը առանձին համոզում է Կախովսկուն Ռիլեևին

տված խոսման փորձը չանել[1]։ Ինչով է դեկավարվել Բեստուժևը յետ կանգնեցնելով Կախովսկուն։ Ցավ ինչո՞ւ Կախովսկին, վորը չեր տատանվում ձեռք բարձրացնել Միլորադովիչի վրա—զիջել է նրա պնդումներին։ Հետո։ Ռիլեևի մոտ կայացած վերջին ժողովում դեկտեմբերի 13-ի յերեկոյան վճռված է յեղել, վոր հետևյալ որը, առավոտյան Ա. Բեստուժևը և Ցակուբովիչը, Մոսկովյան գունդը զորանոցներից դուրս բերելով, նրանց հետ միասին կգնան Լիտեյնոյում գտնվող թնդանոթաձիգների զորանոցները այնտեղից թնդանոթները վերցնելու և թնդանոթաձիգներին կոչ անելու դեպի Սենատի հրապարակը։ Այդ նույնպես չի արվում։ Իսկ մինչ այդ վորքան կարևոր կլիներ դավադիրների համար իրենց կողմն թնդանոթներ ունենալ։ Բայց և այդ սարսափելի սխալը կարող եր ուղղել Պանովը լեյբ-գրենադերների հետ Դվորցովի հրապարակով անցնելիս նույն այն թնդանոթների մոտով, վորոնք հետո կարտեչ թափեցին ապստամբների գլխին։ Բոլորն ել ասում են, վոր այն ժամանակ Պանովը կարող եր այդ թնդանոթները գրավել։ Սակայն նա նույնիսկ չի փորձում այդ անել։ Նույն այդ Պանովը իր գինվորներով անցնում է Պետրոպավլովսկի բերդի միջով, հետևապես առանց դժվարության կարող եր գրավել այն, դրանով, անհաջողության դեպքում ապահովելով հուսալի մի հենարան իր համախոհների համար։ Սակայն ինչպես յերևում է, այդ միտքը նրա մեջ չի ծագում։ Ի՞նչով բացատրել այդ սխալները։ Ցավ վերջապես ի՞նչով բացատրել այն թերևս ամենամեծ սխալը, վոր ապստամբները մինչև յերեկո մնում են կանգնած հրապարակում, ժամանակ տալով իրենց թշնամիներին ուժեր հավաքելու, և չեն կանխում նրանց հարձակումն ու վաղ առավոտից չեն հարձակվում պալատի վրա։ Մարդու սիրտը ճմլվում է, յերբ մտածում ես, վոր, շնորհիվ բոլոր այդ ու դրա նման սխալների, դավադիրները հնարավորություն չունեցան իրենց թշնամուն դաժան և սարսափելի հարվածներ հասցնել։ Ցավ ակամայից ինքդ քեզ հարց ես տալիս՝ մի՞թե իսկապես կորովամտություն, վճռողականություն կամ քաջություն չեն ունեցել խելոք ու յեռանդով լի, առանց անգամ ամենաչնչին յերկյուղի, մահվան աչքերին նայող այդ փայլուն զինվորական մարդիկ։ Վո՛չ, նման յենթադրությունը բնավ չի համապատասխանում նրան, ինչ մենք գիտենք դեկաբրիստների մասին։ Իսկ յեթե այդ այդպես է, այն ժամանակ հարց է առաջ գալիս՝ ի՞նչով և բացատրվում դավադիրների 1825 թ. դեկտեմբերի տասնվեցերորդի աննպատակահարմար գործելակերպը։

Ցավ կարծում եմ, վոր այդ հարցին ճիշտ կարելի յե պատասխանել միայն ցույց տալով նրանց հոգեբանության այն գիծը, վոր

[1]) «Четырнадцатое декабря» И. Пущина. стр. 146.

մատնանշեցի, ասելով, թե նրանք գիտակցաբար եկին գնում նահատակության։ Նրանք քիչ էին հավատում իրենց ապստամբության անմիջական հաջողությանը. այդ ցույց են տալիս նրանցից շատերի սեփական խոստովանությունները։ Անիշխանության ժամանակ, Ռիլեևի մոտ տեղի ունեցած խորհրդակցություններին՝ պարզվում է, վոր գաղտնի միության ուժերը շատ քիչ են։ Ցերբ վոր դեկտեմբերի 12-ի առավոտյան զանազան գնդերից պատգամավորներ են հավաքվում Ռիլեևի մոտ, նրա հարցումին՝ «նրանցից ամեն մեկը քանի հոգի կարող է Սենատի հրապարակը բերել», նրանք պատասխանում են, վոր յերաշխավորել չեն կարող վոչ մի մարդու համար։ Նման պայմաններում դժվար եր վստահություն տածել դեպի հաղթանակը։ Ցեվ յեթե դավադիրները այնուամենայնիվ հրապարակ են դուրս գալիս, այդ բացատրվում է նրանց այն համոզմունքով, թե իրենց կորուստը անհրաժեշտ է «քնած ռուսաստանցիների» արթնացման համար։ Ռիլեևը, վորը իրեն ասելով կարող եր ամեն ինչ կանդնեցնել և վորը բոլորին հորդորում եր գործի անցնել, լավ գիտեր, վոր կորուստի յե գնում։ Նույն բանը գիտեին, ինչպես յերևում է, և մյուսները, որինակ յերիտասարդ իշխան Ոդոյևսկին, վորն ապստամբության նախորյակին բացականչել եր. «մենք կմեռնենք, բայց փառքով կմեռնենք»։

Ցեթե մենք յենթադրենք, վոր այսպես է յեղել գաղտնի միության անդամների տրամադրությունը, այն ժամանակ նրանց զործողությունը Սենատի հրապարակում բոլորովին այլ լուսաբանություն կստանա։ Դեկտեմբերի 14-ի անցքերի վրա նայելով իբրև միապետության կողմնակիցների և քաղաքական ազատության կողմնակիցների միջև տեղի ունեցած ճակատամարտի վրա, մենք չենք կարող դավադիրների գործողությունների մեջ անհետևողականություն և աննպատակահարմարություն չընկատել։ Իսկ յեթե այդ նույն անցքերի վրա մենք նայենք իբրև զինվորական մանիֆեստացիայի վրա՝ ձեռնարկված այնպիսի մարդկանց կողմից, վորոնք ժամանակ չեն ունեցել անգամ լուրջ կռվի պատրաստվելու և վորոնք վճռած են յեղել մեռնել, վորպեսզի իրենց կորուստով հետագա սերունդներին ճանապարհ ցույց տան, այդ դեպքում նրանց գործողությունների կարծեցյալ անհետևողականությունն ու անպատակահարմարությունը բացատրվում է շատ հասարակ կերպով՝ նրանք չեն ցանկացել ուժեղացնել արյունհեղությունը և ավելացնել զոհերի թիվը։ «Այդ մարդիկ ցանկանում եին հայտարարել համայն ժողովրդին ռուսական ազատության միտքը,—իրավացիորեն ասում է Գերցենը,—դիտնալով, վոր իրենք կորչելու յեն, իսկ համայն ժողովրդին մի անգամ հայտարարված միտքը արդեն յերբեք չի կորչի»[1]։ Նման տրամադրության դեպքում այն հարցը՝ արդյո՞ք կհաջողվի թե վոչ թնդանոթները վերցնել կամ Պետրոպավլովսկի բերդը գրավել—նրանց աչքում կարող եր յերկրորդական կամ յերրորդական նշանակություն ունենալ։

Իսկ յեթե, նայելով խնդրին այդ տեսակետից, մենք մեզ հարց տանք՝ հասա՞ն արդյոք ապստամբները իրենց գլխավոր նպատակին, այդ դեպքում մենք առանց տատանվելու կպատասխանենք դրական պես, վորովհետև, ինչպես այդ շատ լավ ասել է նույն Գերցենը—Սենատի հրապարակում հնչած թնդանոթային վորոտը մի ամբողջ սերունդ արթնացրեց։

Կավելացնեմ ես, վոր այդ տեսակետից դավադիրների հերոսական անձնազոհությունը ավելի պայծառ է ներկայանում։ Կրկին կնիշեմ Ռիլեևին։ Ցերբ նա դեկտեմբերի 14-ին պատրաստվում եր տանից դուրս գալ, կինը գլխի ընկնելով, վոր նրան մեծ վտանգ է սպառնում, սկսում է նրան աղերսալի խնդրել, վոր մնա։ «Քաղաքացի» վոտանավորի հեղինակը մնում է անսասան։ Այն ժամանակ վշտից ընկճված խեղճ կինը կանչում է իր աղջկան. «Նաստենկա, խնդրիր հորդ քո և իմ կողմից»։ Վախեցած յերեխան մոտ է վազում հորը ու հեկեկալով գրկում նրա ծնկները, մինչ այդ մայրը համարյա ուշաթափ ընկնում է նրա կըրծքին։ Ռիլեևը կնոջը դնում է բազմոցին և, ազատվելով աղջկա գրկից, հրապարակ է գնում[2]։ Այդ ցնցող տեսարանի առաջ դժգունում են Ռիլեևի հերոսական ինքնազոհության մասին բոլոր արտահայտությունները։

Դեկտեմբերի 14-ի անցքի վերջաբանը հանդիսանում է Բելայա Ցերկովի մոտ 1826 թ. հունվարի 3-ի ընդհարումը, վոր տեղի ունեցավ Ս. Մուրավյովի հրամատարության տակ ապստամբված Չերնիգովսկի հետևակ գնդի զինվորների և գեներալ Գեյսմարի զորամասերի միջև։ Նշանակալի է, վոր այդ ընդհարման մեջ վճռողական դերը հրետանին խաղաց։ «Վորոշ տարածությամբ մոտենալով մի փոքրիկ բարձրության, վորի յետևից յերկու թնդանոթ եր գործում,—ասվում է Վասիլիևսկու «Белая Церковь» պատմվածքի մեջ, վորը գրի է առնված Սոլովյովի, Բիստրժիցկու և Մաղոլևսկու[3]) խոսքերից, Մուրավյովը առաջարկում է ցրել հրացանաձիգներին ու նրանց կրակի տարափի տակ հարձակվել թնդանոթների վրա, բայց նախ քան այդ իրագործելը, կարտեչի կրակ բացվեց։ Առաջին գնդակներից վիրավորվեց

[1]) «Четырнадцатое декабря и император Николай» стр. 238.

[2]) Н. Бестужев, op. cit,—«Полярная Звезда», стр. 30.

[3]) Այս պատմվածքը տպագրված է «Դեկաբրիստների գրությունների (Записки декабристов) մեջ, выпуск второй и третий, стр. 165—181.

Սերգեյ Մուրավյովը կարաբեչով դանդի ձախ մասում աչքի վերևից, և նրա գումարտակը ցրիվ յեկավ»։

Նիկոլայը հիմա կարող եր իր լրիվ հաղթանակը տոնել։ Ցեվ նա ըստ իր տոնեց։ Պետրոպավլովսկի բերդը լեփ-լեցուն եր բանտարկյալներով, վորոնցից ամեն ջանք գործ եյին դնում այսպես կոչված «անկեղծ խոստովանություններ ստանալ»։ «Կեռ գիշերին հանկարծակի բացվում եյին բանտի դռները բանտարկյալի վրա ծածկոց եյին գցում, լռելյան առաջնորդում բանտի միջանցքներով, բակերով ու անցքերով։ Յերբ վոր ծածկոցը վերցնում եյին, նա արդեն գտնվում եր ատենական դահլիճում գաղտնի հանձնախմբի անդամների առաջ։ Անդամները կյանքի ու մահու հարցեր եյին տալիս, վայրկյանական ու մանրամասն պատասխաններ եյին պահանջում, թագավորի անունից ներում եյին խոստանում անկեղծության համար, ժխտում եյին արդարացումները, հայտարարելով, վոր դրանք հետագայում թույլ կտրվին դատարանի առաջ, ցուցմունքներ եյին հնարում, յերբեմն մերժում եյին մեղադրյալների հետ յերես առ յերես հանդիպման և հաճախ, վոգեվորված իրենց գործ դրած յեռանդով, դիմում եյին սպառնալիքների ու անարգանքների, վորպեսզի հարկադրեն խոստովանության կամ ուրիշների մասին ցուցմունքներ տալու։ Ով լռում եր դեպքի մասին տեղեկություններ չունենալու պատճառով, կամ անմեղներին կորուստի մատնելու յերկյուղից, նրան բանտում ղրկում եյին լույսից, ուժասպառ եյին անում քաղցից ու շղթաներն ավելացնում։ Բժշկին հանձնարարված եր համոզվել, թե մեղադրյալը ինչքան ֆիզիքական տանջանք կարող է տանել[1]։ Յերբ Ի. Դ. Յակուշկինը հրաժարվեց մատնել իր ընկերներին, նրան հարցաքննող Լևաշովը բացականչեց. «Այդ դեպքում ձեզ կհարկադրեն անվանել նրանց. յես դատավորի պարտականություններին եմ անցնում և ասում եմ ձեզ, վոր Ռուսաստանում հարցաքննությունների ժամանակ տանջանք կա»։ Յակուշկինի վերաբերյալ տանջանքը սահմանափակվեց նրան շղթայակապ անելով միայն, բայց մյուսները ավելին կրեցին։ Ահա ինչ է պատմում Պեստելի մասին դեկաբրիստներից մեկը, վորը տեսել եր նրան մահվան պատժից առաջ։ «Նրան տեսա հիվանդությունից հետո։ Նա կրել եր քրիստոնեության առաջին շրջանի ամեն տեսակի տառապանք ու տանջանք։ Գլխի վրայի յերկու արյունոտ ճեղքվածքները այդ տանջանքների վկաներն են։ Պիտի յենթադրել, վոր գլխին պինդ հագցրած յերկու ներս ընկած խոր ակռաներով յերկաթե ողը թողել եր նրա գլխի վրա իր յերկու խոր արյունոտ հետքերը[2]»։

[1]) «Разбор донесений тайной следственной комиссии» в «Записках декабристов», стр 104.

[2]) «Воспоминания о Кронверкской куртине (из Записок декабриста) в сборнике, напечатанном в Лейпциге и носящем странное заглавие: Революционные опыты возбуждающегося нигилизма (sic!). Պեստելի հակատի ճեղքվածքների մասին տես եջ 303։

Յերբ քննիչների վոչ մարդկային դաժանությունները թուլացրին միության յերկրորդական անդամներից մի քանիսի (շատ քչերի) արիությունը, այնուամենայնիվ նրա ահագին մեծամասնության վրա սարսափեցնող ազդեցություն չգործեցին։ Քննիչ հանձնախմբի (Следственная Комиссия) տեղեկագիրը համարյա թե նրանցից ամեն մեկին եվ խորը զզջում է վերագրում։ Սակայն ամեն վոք, ով ուշադրությամբ կկարդա այդ զեկուցումը, կհամոզվի, վոր նա ճշմարտությունը սիստեմատիկ կերպով աղավաղում է։ Ահա մի փայլուն որինակ, վոր բերել է Գերցենը իր «Դեկտեմբերի 14 և Նիկոլայ կայսրը» գրքի մեջ։ «Յակուշկինի մահապատիժը փոխարինեցին քսան տարվա տաժանակիր աշխատանքի, հարգելով նրա լիակատար զղջումը։ Մինչդեռ Յակուշկինի զղջումը կայանում եր միայն հետևյալում։ Նա դատարանին ասաց, վոր համաձայնել եր թագավորի սպանության և ինքն եվ պատրաստ եր այդ իրագործելուն ու, հետևաբար, նա պետք է մահվան դատապարտվի, թող իրեն կախեն, բայց ինքը դրանից բացի եվ վոչինչ չի ասի։ Ինքը Նիկոլայ կայսրը կանչեց նրան իր մոտ և հրամայեց խոստովանել։ Յակուշկինը նրան եվ ասաց նույնը՝ ինչ դատարանում։ «Բայց գիտես թե դու ում առաջ ես կանգնած, բացականչեց կայսրը։ «Նրա համար, վոր դու կայսրին ճշմարտությունը չես ասում, յե՞թե յես ներեմ եվ քեզ, այն աշխարհում Աստված չի ների»։—«Բայց չե վոր յես հանդերձյալ կյանքի չեմ հավատում» հանդիստ պատասխանեց Յակուշկինը։ «Դուրս տարեք այս գարշելուն» գոռաց Նիկոլայը և հրամայեց Յակուշկինին կրկին բանտ տանել և տալ նրան ավետարան, պասուց կերակուրներ ու ամեն որ քահանա ուղարկել նրա մոտ՝ խրատներ կարդալու։ Ահա և Յակուշկինի ամբողջ զղջումը»։ Բիլևը ուղղակի հայտարարեց քննիչ հանձնախմբում, վոր դեկտեմբերի 14-ի պատիվը իրեն է վերաբերում և վոր ինքը կարող եր ամեն ինչ կանգնեցնել, բայց անհրաժեշտ եր համարում հորդորել գործի անցնել։ Հանձնախմբի տեղեկագիրը նրան եվ «լիակատար զղջում և մտածելակերպի փոփոխում» է վերագրում։ Այդ զրպարտությանն ամենից լավ պատասխանում է Բիլևի բանտում գրած (մեխով անագե ափսեյի վրա) քառյակը։

Բանտը պատիվ է ինձ և վոչ անարգանք,
Արդար գործի դատն է բերել ինձ այստեղ։
Ամո՞թ համարեմ շղթա ու կապանք՝
Յերբ կրում եմ, իմ հայրենիք, քեզ համար։

Բրեական բարձրագույն դատարանը «ընդունեց և միաձայն վո-

ոշեց, վոր գործերում նշանակված և մեղադրյալների խոստովանությամբ յերկու անգամ վավերացված բոլոր հանցանքները, առանց բացառության, յենթակա յեն մահապատժի»։ Նման դատավճիռը ընդարձակ տեղ եր տալիս ինչպես «բարձր արքայական վողորմածության», նույնպես և «փրկարար խստության»։ Նոր կայսրի կողմից «ամենավողորմած» կրկնակի միջնորդությունից հետո, դատավճիռը այնուամենայնիվ պարունակում եր իր մեջ մեղադրյալներից հինգի վերաբերյալ մահապատիժ, իսկ մնացածների վերաբերյալ տաժանակիր աշխատանք, աքսոր, ծառայություն իբրև հասարակ զինվոր, վորոշ կամ անորոշ ժամանակով։

Դատավճիռը մեղադրյալներին հայտարարվեց 1826 թ. հուլիսի 13-ին. այդ որը բարձրագույն դատարանում պահակախումբ եր նշանակված կավալերդարդների մի ամբողջ եսկադրոն, վորոնք մեղադրյալներից մեկի ասելով, նայում եյին նրանց վրա սրտառուչ և խղճահարությամբ[1])։

Ահա ինչպես ե նկարագրում նույն այդ դատապարտյալը Ռիլեևի և նրա ընկերների մահը.

«Նույն հուլիսի 13-ի[2]) յերեկոյան ժամը յոթին յեկան յեկեղեցու պաշտոնյաները մեր նահատակներին մահվան նախապատրաստելու։ Ժամը ութին նրանց համար պատանքներ ու թախծորեն զնդող շղթաներ բերին։ Հետո ամեն ինչ հանդարտեց։ Հոգնածությունը, ուժասպառությունն ու այդ որվա հոգեկան հուզումները բոլոր մնացածներին հարկադրեցին խաղաղվել, և այդ հանդիսավոր լռությունը, վոր ընդհատվում եր միայն պլաց-մայորի և պլաց-ադյուտանտի անընդհատ կրկնություններով—չխոսել մահվան դատապարտվածների հետ, զարմանալի վեհություն ուներ իր մեջ։ Բանտային սենյակներում սպասավորող զինվորները, վոտների ծայրերի վրա եյին մտնում գալիս, վորպեսզի չխանգարեն այդ լռությունը։ Նրանք լալիս եյին։ Գիշերվա ժամը յերկուսին շղթաները վերջին անգամ զնգացին։ Հինգ նահատակներին կախելու տարան Կրոնվերսկու միջապատնեշի փոսը։ Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը ճանապարհին բարձրաձայն ասաց ուղեկցող քահանային, թե դուք հինգ ավազակներ եք տանում Գողգոթա,—և «վորոնք,—պատասխանեց քահանան—կլինեն ընդ աջմե հոր»։ Ռիլեևը, մոտենալով կախաղանին, արտասանեց. «Ռիլեևը մեռնում ե իբրև չարագործ, թող հիշի նրան Ռուսաստանը»։ Նրանց կախաղան եր տանում Պավլովսկի լեյբ-գվարդիայի գնդի կապիտան Ստեպանովը... Հենց այդ ժամանակ բերդում ասում եյին, թե այն թոկերը, վորոնցից կախեցին Ռիլեևին և Բեստուժևին,

[1]) Воспоминания о Кронверкской куртине, вышеназванный сборник., стр. 291

[2]) Դա ակներև սխալ ե, վորովհետև դատավճռի կատարածումը թելադրված եր Մենշոռի կողմից 13 հուլիսին։

Բեստուժևին, կարվեցին ու նրանց նորից յերկրորդ անգամ կախեցին[1])։

Այդ որից անցել ե 75 տարի, և ուրիշ շատ մահապատիժներ ե տեսել մեր խեղճ հայրենիքը, ուրիշ շատ զոհեր են բերվել ռուսական ազատության գործին։ Սակայն Պավել Պեստելի, Կոնդրատիյ Ռիլեևի, Սերգեյ-Մուրավյով-Ապոստոլի, Պյոտր Կախովսկու և Միխայիլ Բեստուժև-Ռյումինի անունները կմնան ազատություն սիրող բոլոր ռուս մարդկանց հիշողությունների մեջ, վորպես մեր այն առաջին, անվախ, բազմաթիվ նահատակների անունները, վորոնք իրենց կյանքը զոհեցին իրենց հեղափոխական ձգտումների համար։ Մենք, սոցիալ-դեմոկրատներս, հիշում ենք այդ նահատակներին մեր հասկացած ձևով, հետապնդելով նույն նպատակը, վորին ձգտում եյին նրանք ամբողջ հոգով ու մտքով։ Սակայն հենց այդ պատճառով, վոր մենք հարգում ենք այդ մարդկանց՝ իբրև մեր նախորդների՝ և ցանկանում ենք շարունակել նրանց գործը, մենք իրավունք չունենք աչքներս փակել այն հանգամանքի հանդեպ, վորը խանգարեց նրանց անմիջական հաջողությանը։ Այդ հանգամանքը մատնանշել ե դեռ Գերցենը.—Նրանք ժողովրդի կողմից աջակցություն չունեցին և «նրանց բախտը վորոշված եր»[2])։ Յես արդեն մատնանշեցի, թե այն դասակարգը, վորին պատկանում եյին դեկտեմբերի 14-ի մարդիկ, իր իսկ դրությամբ պահպանողական եր։ Ազնվականության այն փոքրամասնությունը, վորը կարողացավ դասային նախապաշարումներից և շահերից բարձր կանգնել, շատ եր թույլ, վորպեսզի կարողանար հասնել իր իդեալների իրագործման։ Այդ հարկավոր ե իմանալ և հիշել, վորովհետև Ռուսաստանի հեղափոխական մտքի հետագա ամբողջ պատմությունը, շատ քիչ բացառությամբ, կարելի յե ձևակերպել իբրև փորձերի մի շարք՝ գտնելու գործունեության այնպիսի ծրագիր, վորը հեղափոխականներին ապահովեր ժողովրդական մասսաների համակրանքն ու աջակցությունը։ Մենք, սոցիալ-դեմոկրատներս, համոզված ենք, վոր գտել ենք այդպիսի ծրագիր։ Յեթե լակեռ ընդունելով աշխատավոր մասսայի ու նախ և առաջ նրա ամենաառաջավոր մասի—պրոլետարիատի անմիջական տնտեսական շահերը, մենք աշխատում ենք զարգացնել նրա քաղաքական ինքնագիտակցությունը և ժողովրդականացնել նրա մեջ քաղաքական ազատության համար մղվող պայքարի գաղափարը։ Դրա մեջ ե կայանում մեր վրիժառությունը ցարիզմի հանդեպ այն զոհերի համար, վորոնք ընկել են ու ընկնում են նրա հարվածների տակ։ Յերբ վոր զարգանա ռուս աշխատավոր մասսաների քաղաքական ինքնագիտակցությունը, այն ժամանակ—և միայն այն ժամանակ

[1]) «Воспоминания» и т. д. там же, стр. 295—296: Իրոք կախվեցին վոչ թե յերկու, այլ յերեք դատապարտյալներ—Ռիլեև, Կախովսկի և Մուրավյով—Ապոստոլ

[2]) «Четырнадцатое декабря» стр. 199.

—կծագի «նմայիչ յերջանկության այն արշալույսը», վորի մասին Պուշկինն ասում է Չաադաևին ուղղած ձոնի մեջ. այն ժամանակ, և միայն այն ժամանակ,—

Ռուսաստանը կզարթնի քնից
Ու կթոթափի լուծը միապետության։

Главлит 52114. Москва, 1925. Тираж 3000.

3-я Типография Госиздата С. С. Р. Армении. Армянский пер., 2.

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.